ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	թիվ 19	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Կարգադրություն	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Չի հրապարակվել	*Ընդունման վայրը*	Մոսկվա
Ընդունող մարմինը	Եվրասիական միջկառավարական խորհուրդ	*Ընդունման ամսաթիվը*	27.11.2016
Ստորագրող մարմինը	Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ	*Ստորագրման ամսաթիվը*	27.11.2016
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը		*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՄԱՍԻՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

27 նոյեմբերի 2016 թվականի **թիվ 19** **քաղ. Մոսկվա**

«ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՄԱՍԻՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 16–րդ հոդվածին համապատասխան՝

1. Հավանություն տալ «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրին կից ներկայացվող նախագծին եւ այն ուղարկել Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ՝ Պայմանագրի ստորագրման համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անցկացնելու համար:

2. Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին՝ տեղեկացնել Եվրասիական տնտեսական հանձնաժողովին սույն Կարգադրության 1-ին կետում նշված Պայմանագրի ստորագրման համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի անցկացման մասին՝ ելնելով 2016 թվականի դեկտեմբերին Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստին այն ստորագրելու անհրաժեշտությունից:

3. Սույն Կարգադրությունն ուժի մեջ է մտնում «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում՝ Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքում, դրա հրապարակման օրվանից:

Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	Բելառուսի Հանրապետությունից	Ղազախստանի Հանրապետությունից	Ղրղզստանի Հանրապետությունից	Ռուսաստանի Դաշնությունից